Ծուշանիկ Կուրղինյան

Նվեր աղջկաս

Նախշուն աչքերիդ ժպտող հայացքում,
Երբեմն տանջված հոգիս փափագով
Սուզվում է լռիկ, մոռցված նիրհում
Գալիք օրերի
Հույսերի ցանցում:

Նախշուն աչքերիդ խոր-խոր ծալքերում
Անվիշտ աշխարհի մանուկ ցոլքերով,
Իմ ապրած սիրտը հաճախ սփոփվում.
Գալիք օրերի
Անվերջ երազում:

Տեսնում եմ այնտեղ իմ անբիծ հոգին,
Դեռ շղթայված կյանքի կապանքից,
Տեսնում՝ մոռացված կարմիր օրերին
Մանուկ իղձերիս
Պսակը գլխին:

Հրճվում է հոգիս չարքաշ այս կյանքից,
Որ անհայտ երբեք կորչելու չեմ ես
Թեև հաղթահար ընկնեմ ես կռվից,
Բայց իմ գնալուց
Կը թողնեմ մի Ես:

Քեզ կտամ օժիտ հոգուս խորքերից
Չար կյանքի խեղդված ազնիվ իդեալներ,
Եվ ուժ՝ որ փշրես սև-սև օրերից
Տգետ պայմանով
Կոփված շղթաներ: